

Մանուկ Աբեղյանը հայրենների կին հեղինակների մասին

Վանո Շդիագարյան

Գայանե Հովիվյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2024.1-89>

Հանգուցային բառեր. Նահապետ Քուչակ, աշուղ, հայրենների կին հեղինակներ, ձեռագրական փաստեր, աբեղյանական տեսության ճշմարտացիություն

Սույն հոդվածի **խնդրո առարկան** հայրենների կին հեղինակների մասին Մանուկ Աբեղյանի առաջադրած տեսակետի քննությունն է: Հոդվածի **նպատակն է** ցույց տալ, որ Մանուկ Աբեղյանը հայրենների հեղինակներ է համարում ոչ միայն տղամարդ գուսաններին, այլև կին երգիչներին, որով պայմանավորված է հոդվածի **արդիականությունը**: Հոդվածում կիրառել ենք **պատմական և հերմենևտիկայի** մասնագիտական մեթոդները: **Գիտական նորույթը** Մանուկ Աբեղյանի տեսության պաշտպանությունն է՝ հայրենների նոր տեսակետով ու ձեռագրական նոր փաստերով հիմնավորված:

Նախաբան

Խնդրո առարկա հարցը Մ. Աբեղյանն առանձին քննության չի ենթարկել, սակայն «Նահապետ Քուչակի դիվանը» ուսումնասիրության տարբեր հատվածներում անդրադարձել է հայրենների կին հեղինակներին:

Այսպես՝ «Հայրենների փոփոխակները» ենթագլխում Մ. Աբեղյանը մեջբերում է երեք հայրեն՝ գրելով. «Այս երգերից առաջինի մեջ երգչուհին (որովհետև դա **կնոջ** երգ է) պատմում է, թե ինչպես լուսադեմին իր յարը ուզեցել է հեռանալ - և ինքը փորձել է արգելել նրան, բայց անաջող: Երգն իր բնավորությամբ այնպիսի է, որ հարմարվում է նշանած տղայի գիշերային այցելությանն իր յարին մինչև լուսադեմ, ինչպես թույլատրված սովորություն էր գյուղերում» [1, 93]: Այստեղ խոսքը «Ահա նշանեցաւ երկինք» սկսվածքով հայրենի մասին է: Իսկ «Գիշեր ու ցերեկ կուլամ» սկսվածքով մեկ այլ հայրենի մասին գրում է. «...երգի սկզբում չկա լուսադեմի նկարագիրը - առաջին երգի սկզբի երկու տողը, դրա փոխարեն՝ երգչուհին սկզբում հայտնում է, որ ինքը գիշեր-ցերեկ, ուրեմն երկար ժամանակից ի վեր, լալիս է, և ապա բացատրում է դրա պատճառը, այն է՝ իր յարն ուզեցել է հեռանալ, ինքը փորձել է նրան արգելել, բայց իզուր» [1, 93]:

Իսկ «Հետ հոգոյս ի վեր թոայ» սկսվածքով հայրենի մասին Մ. Աբեղյանը գրում է. «Այստեղ երգչուհին պատմում է, թե ինչպես ինքը փորձել է իր յարին արգելել, որ չգնա, բայց անաջող. և այդ ժամանակ ասել է նրան, թե օտար աշխարհում պիտի կարոտի և շարունակ լա: Այս վերջին երգն արդեն մի պանդուխտի կնոջ երգ է, այն վայրկյանի նկարագրով ու տրամադրությամբ, երբ յարը պիտի մեկնի» [1, 93]:

Հետ հոգոյս ի վեր թոայ
Բռնելու եւ արգիլելու,
Զերդումն ի բերանդ առիր,
- Երթալու եմ, չեմ կենալու,
- Երթաս ի դարիպ աշխարհի,
Ի յօտար երկիր ի հեռու,
Լայ արտիկդ ու զիս ուզէ,
Չկտրի աչերտ ի լալու:

Իսկ «Քառյակների շարժունությունը» ենթագլխում Մ. Աբեղյանը անդրադարձել է «Ամ երեստ է ր է դեղնել» սկզբածրով հայրենին.

Ամ երեստ է ր է դեղնել
Ի երեսիտ գունն գնացեր.
Գէւմ քո մանչն չէ մեռել
Կամ օտար երկիր գնացեր.
Թէ ես լամ՝ նա հաղ ունի,
Որ գիտեմ՝ ինչ եմ կորուսել.
Կորել է իմ հոգուս հոգին
Ի անհոգել ես եմ մնացել [5, 169]:

Մ. Աբեղյանն այս հայրենի մասին գրել է, թե «... մի կին մի ուրիշին ուղղած հարցման ձևով հայտնում է, թե ինքը որ լալիս է, իրավունք ունի, քանի որ իր հոգու հոգին կորել է. մինչդեռ իր բարեկամուհին ոչ մի հիմք չունի արտասվելու, քանի որ նրա յարը ոչ մեռել է, ոչ օտար երկիր գնացել: Ամբողջ տաղն ուրեմն ասված է առաջին կնոջից» [1, 120]: Ամեն դեպքում պարզապես գործ ունենք կնոջ կողմից երգվող հայրենի հետ՝ անկախ այն բանից՝ առաջի՞ն, թե՞ երկրորդ կինն է ասողը:

Հայրենները համարելով «բազմաթիվ հեղինակների բանաստեղծություն»՝ «Ժողովրդական կենցաղը հայրենների մեջ» ենթագլխում Մ. Աբեղյանը նկատել է. «Արդ, հայրենների մեջ ևս կան այնպիսիները, որոնք երգվում են կնոջ բերանից: Դրանք բանաստեղծուհիների հորինած երգերն են, կամ թե հին երգչուհիները տղամարդկանց հորինած երգերը վերամշակելով՝ դարձրել են կնոջ երգեր» [1, 177]:

Հայրենների ուսումնասիրությունը Մ. Աբեղյանին բերել է մի շարք հիմնավոր եզրահանգումների, որոնցից է նաև հետևյալը. «Հայրենների մեծագույն մասը, բնականաբար, տղամարդի հորինվածքներ են. կան բավական թվով հայրեններ էլ, որ ընդհանուր բնավորություն ունեն, այսինքն՝ կարող են և տղամարդի և կնոջ համարվել և դժվար է որոշել դրանց հեղինակի սեռը: Բայց կան այնպիսիները, որոնք պարզապես կնոջ երգեր են...» [1, 177], ապա նշում է կին հեղինակներ ունեցող հայրենների օրինակների համարներ, սակայն չի կատարում դրանց քննությունը:

Աբեղյանի տեսության ճշմարտացիության հիմնավորում

Հայրենների հեղինակների հարցի համար չափազանց կարևոր այս խնդիրը, բնականաբար, արժանի է եղել հատուկ ուշադրության, ուստի դրան անդրադարձել ենք նաև մենք 2007 թ. «Հայրեններ. ուսումնասիրություն» գրքում՝ զարգացնելով Մ. Աբեղյանի տեսությունը՝ վկայակոչելով բազմաթիվ հայրեններ, որոնց հեղինակները կանայք են:

Բերենք դրանցից մի քանիսը, որպեսզի ավելի ակնհայտ դառնա Մ. Աբեղյանի սկզբնավորած տեսությանը իրավացիությունը:

Սրտիկս է եղեր դալամ,
Բաժնելու թխտիկ կու գրե.
Կանչեմ՝ Ո՛ հ, իմ Տէր Աստուած,
Ջամենայն դարիս դու պահե.
Ղարիպ գնացած ունիմ,
Իմ տարտերն գիս կու լափե.
Շալայ թէ շուտով դառնայ,
Թէ չէ իմ հոգիս կու ելնե [5, 54]:

Սպասման ու կարոտի զգացումը համակել է պանդուխտ ունեցող կնոջ սիրտը, որին տանջում են դարդերը: Կանացի սրտից բխած մաղթանք է, աղերսախառն աղաչանք, որ

Աստված պահպանի բոլոր պանդուխտներին, իսկ հայրենի ավարտն էլ կանացի ցանկությունն ու կարոտի կանչի արտահայտություն է. երանի վերադառնա իր ցանկալին, թե չէ ինքը կմեռնի կարոտից: Անշուշտ, այս դեպքում մենք գործ ունենք մի հայրենի հետ, որի հեղինակն անկասկած կին է. հակառակը պնդելն ուղղակի անտրամաբանական է:

Կանացի հոգեբանության մի յուրահատուկ դրսևորում է նաև սիրո անբավարարությունից գանգատվելը, որն արտահայտվել է որոշ հայրեններում.

Հագեր ես քեմխա կապայ,
Ֆերէճէտ գերպապ սերասար.
Ով տեսնում՝ տի գանկատիմ,
Թէ իմ էարն ինձ պագ մի չի տար [5, 96]:

Այս հայրենում կինը գանգատվում է իր յարից, որ դարձել է քահանա, հագել է կրոնավորի զգեստ և այլևս չի համբուրում իրեն: Սիրվելու անհագ ցանկությունն այս դեպքում արտահայտվել է գանգատվող կնոջ շուրթերով: Անկարելի է կարծել, թե կրոնավորի զգեստ կարող էր հագած լինել կինը, իսկ տղամարդը գանգատվեր, թե իրեն չի համբուրում փարաջա հագած իր սիրուհին: Ուրեմն՝ այս հայրենը ևս անվերապահորեն կնոջ կողմից է ասված:

Եկին ու խապար բերին,
Թէ քո էարն եղեր հաբեղա.
Փուշ արմացքըն՝ զիս պատեց,
Թէ նայ ո՞նց եղաւ հաբեղա.
Բերնիկն էր շաքրի սովոր,
Աճապ ո՞նց կերաւ նա բակլայ.
Անձնիկն էր շապկի սովոր,
Աճապ ո՞նց հագաւ նայ վալայ [5, 131]:

Անտարակուսելի է, որ այս հայրենն էլ կնոջ կողմից է ասված: Լուր են բերել, որ իր յարը դարձել է արեղա. անշուշտ, արեղա դարձողը տղամարդ է, իսկ լուրն ստացողը և այս երգն ասողը կին է, որը վայելել է այդ տղամարդու սերը և զարմանքով է ընդունում նրա արեղա դառնալու լուրը: Սա այն դեպքն է, երբ հնարավոր չէ պնդել, թե արեղա դարձողը կին է, ուստի և չի կարելի դույզն-ինչ մտորել, թե հայրենի հեղինակը կարող է տղամարդ լինել:

Եկոյ զքեզ ի ծոցս առնում,
Տեղ շինեմ կրծոցս վերայ.
Օոցս քեզ սեղան քաշեմ,
Օիծըս բարձ՝ էրեսդ ի վերայ.
Կոճկիկըս թուկիկի կոճկեմ,
Որ հոգիս ի ծոցիկս ելնայ [5, 248]:

Այս հայրենը ակնհայտ կնոջ կողմից երգված վայելքի հայրեն է, ուր անկաշկանդ ու բաց պատկերներով կինը հրավիրում է իր սիրած տղային՝ իր ծոցն առնելու, կրծքի վրա տեղ գցելու, իսկ ծիծը՝ բարձ անելու: Այստեղ ավելորդ չենք համարում վկայակոչել Հովհան Մանդակունի կաթողիկոսի «Վասն անօրեն թատերաց դիւականաց» ճառը [8, 163-170], որը խոսուն վկայությունն է այն բանի, որ մեզանում հնուց ի վեր գոյություն են ունեցել գուսաններ ու նրանց վայելքի ու խրախճանքի երգերը: Իսկ վարձակների՝ կին գուսանների մասին կան բազմաթիվ վկայություններ, որոնց անդրադարձել ենք «Կին գուսանները հայոց մեջ» առանձին հոդվածով [3, 58-84]:

Ապրիշում խալի կը ձգեմ,
Ոսկեթել ողջակ ի վրայ:

Բարձրիկ մի սեղան բերեմ
Ու խորված կաքուկն ի վրայ.
Շիշա մի գինի բերեմ,
Որ խքմենք ի սիրոյ վրայ:
Հագնիմ զիմ շարե շապիքս,
Որ շամամ ծծերս երևայ.
Բանամ զարծաթե վնառէսն,
Մուտ ի ներս ու տավրան արայ [5, 264]:

Խալի ու ոսկեթել դռշակ է փռում, սեղան է բացում, գինի բերում, որ խմեն սիրոյ կենացը, ապա հագնում է շապիկը, որ կուրծքը երևա, ու կանչում է իր ծոցը, որ սեր վայելեն: Կնոջ կողմից հնչած վայելքի ու ցանկության անկաշկանդ մի զգացում է արտահայտված այս հայրենում, որի հեղինակը միայն կին կարող է լինել: Անշուշտ, տղամարդը չէր ասի. «Հագնիմ զիմ շարե շապիքս, Որ շամամ ծծերս երևայ...»:

«Հայրեններ. ուսումնասիրություն» գրքում, քննարկելով մի շարք հայրեններ, այդ թվում նաև վերը մեր կողմից բերված հայրենները, եզրահանգել ենք, որ կանայք գուսանական երգերի կատարման հարցում գրեթե չեն զիջել տղամարդկանց:

Սակայն մեր ուսումնասիրության մասին եղան անհարկի քննադատություններ Ս. Մխիթարյանի և Ս. Աբրահամյանի կողմից:

Ս. Մխիթարյանը, անտեղյակ լինելով Մ. Աբեղյանի այս տեսությանը, կին հեղինակների գոյության փաստը համարեց «նոր հազարամյակի» իմ «ցնցող գյուտ»-ը [6], ինչին ի պատասխան ես գրեցի, որ «դա բոլորովին էլ «նոր հազարամյակի» գյուտ չէ, և ոչ էլ ես եմ այդ գյուտարարը» [4], ապա խորհուրդ տվեցի Ս. Մխիթարյանին իմ գրքից բացի կարողալ նաև Մանուկ Աբեղյանի երկերի Բ հատորը, ավելի կոնկրետ՝ այդ գրքի 177 էջը, որպեսզի ինձ այդ հարցում գյուտարար չհռչակի:

Այնուհետև Ս. Աբրահամյանը «Քննադատության հավելված և շրջապատույտ» հոդվածում, առանց հարցի պատմության մեջ խորամուխ լինելու, վերացական դատողություններ է անում. «Գրականագիտական նիհիլիզմը, որ տառապում է նարցիսականությամբ, արտագրական վերլուծության նոր փորձարկում չէ: Ուստի այս մտքի հետևորդներից մեկը՝ Վանո Եղիազարյանը, կարող է Քուչակին նվիրված մենագրության մեջ (Հայրեններ, 2006) ոչ միայն ժխտել որոշ հայրենների պատկանելությունը բանաստեղծին, այլև պնդել, թե տվյալ հայրենների հեղինակը...կին է...» [2, 71]:

Ս. Աբրահամյանի այս ոչ մասնագիտական կարծիքին առանձին հարկ չենք համարել անդրադառնալ, սակայն մեր «Կին գուսանները հայոց մեջ» հոդվածի տողատակում տվել ենք դրա պատասխանը՝ գրելով. «Շեշտենք, որ ոչ թե որոշ հայրեններ չենք համարում Քուչակին, այլ ընդհանրապես հայրենները չենք համարում Քուչակի ստեղծագործությունը, սակայն ոչ բոլոր հայրենների հեղինակներին ենք համարում կին, ինչպես գրում է քննադատը, ով նախ պետք է ընկալի և հասկանա կարդացածը, խնդիրը քննարկի համակողմանիորեն, ապա հանգի որոշակի եզրակացության և տեսաբանի: Ինչպես դիպուկ նկատել է Ս. Մարիյանը, որպես քննադատ Ս. Աբրահամյանը «հանդես եկավ հերմենևտիկայի նախասիրությամբ և սկզբնապես առկա էր մի որոշ խզում հարցի փիլիսոփայական դրվածքի և բնագրի գեղարվեստական համարժեքի միջև, հանգամանք, որ նկատելի էր դարձնում ուժի խճողումը և խոսքի չավարտվածությունը» («Գրականագիտական հանդես», ԺԱ-ԺԲ, 2010-2011, էջ 22):

Պարզ է, թե ինչ գիտական մեթոդով է առաջնորդվել քննադատը, որ հանգել է այդօրինակ «տեսական» ընդհանրացումների, մանավանդ որ քննադատը աշուղական պոեզիան չի տարբերում գուսանականից: Այստեղ է, որ առավել արդարացվում է Ս. Մարիյանի այն

կարծիքը, թե նախ պետք է գրականության պատմաբան լինել, ապա նոր միայն՝ տեսաբան» [3, 77]:

Բնականաբար, գրականության պատմության, մասնավորապես Մ. Աբեղյանի հիմնարար աշխատությունները կարդալու դեպքում ոչ Մ. Մխիթարյանը, ոչ էլ Մ. Աբրահամյանը նման ձևով չէին արձագանքի հայրենների կին հեղինակների գոյության հարցին՝ այն անտեղյակորեն կապելով իմ անձի հետ, մինչդեռ դա Մ. Աբեղյանի նորարարությունն է, որը խորացրել ու զարգացրել ենք մեր աշխատության մեջ՝ ավելի ամրապնդելով մեծ գիտնականի տեսությունը:

Ուրեմն երիցս ճշմարիտ էր Մ. Աբեղյանը, որ Նահապետ Քուչակին համարում էր սուս աշուղ, որը միայն երեք տասնյակ աշուղական երգերի հեղինակ է [այս մասին տե՛ս 7], մինչդեռ մեր հին գուսանաժողովրդական հայրենները, ինչպես եզրահանգում է Մ. Աբեղյանը, «հին աշխարհիկ քնարերգության մնացորդներ են» [1, 280], որոնք «արվեստավոր երգիչներից ու երգչուհիներից, գուսաններից ու վարձակներից, անցնում և պահվում են նաև սոսկական քաղաքացիների ու գյուղացիների մեջ, ուրիշ խոսքով դրանք ընդհանրաճանաչում և ժողովրդականանում են, և, այս, հարկավ, ամենահին ժամանակներից ի վեր» [1, 280]:

Եզրակացություն

Մեծ գիտնական Մանուկ Աբեղյանը, քննելով հայրենների երգաշխարհը, իր աշխատության մեջ տարբեր առիթներով անդրադարձել է հայրենների կին հեղինակների գոյությանը՝ հանգելով հիմնավոր եզրակացության, որ հայրենները մեր հին գուսանաժողովրդական երգերն են, որոնց մի մասի հեղինակներն ու կատարողները նաև կանայք են եղել, ինչը Մ. Աբեղյանի գիտական նորույթն է, իսկ ումանք անտեղյակորեն փորձել են վերագրել տղերիս հեղինակին:

Վերջում, իբրև կին երգիչների գոյության անհերքելի ապացույց՝ հարկ ենք համարում վկայակոչել Մաշտոցի անվան Մատենադարանի հմբ. 9599 ձեռագրում պահպանված երկու նկար, որով ավելի է ամրապնդվում մեծ գիտնականի կողմից հայրենների կին հեղինակների գոյության վաստը.



Կին մի որ տե՛ֆ կու գարնէ , թերթ 101բ



Կին մի որ տարապուլուայ կու զարնէ, թերթ 59ա

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2024.1-89>

Գրականություն

1. Աբեղյան Ս., Երկեր, հտ. Բ, Ե., 1967, էջ 93:
2. Աբրահամյան Ս., Տեքստ և բնագիր, Ե., 2010, էջ 71:
3. Եղիազարյան Վ., Հայագիտական ուսումնասիրություններ, հտ. Ա, Բանագիտություն և միջնադարագիտություն, Ե., 2021, էջ 58-84:
4. Եղիազարյան Վ., Քուչակյան թյուրիմացություն, թե՞ անիմացություն, Գրական թերթ, 25 հունվարի, 2008:
5. Հայրեններ, աշխատասիրությամբ Ա. Շ. Մնացականյանի, Ե., 1995, էջ 169:
6. Մխիթարյան Ս., Նահապետ Քուչակի խնդիրն արդի բանասիրական գնահատումներում, Գրական թերթ, 14 դեկտեմբերի, 2007:
7. Նահապետ Քուչակ, Աշուղական երգեր, աշխատասիրությամբ Վանո Եղիազարյանի, Ե., 2007:
8. Սուրբ Հովհան Մանդակունի, Ճառեր, Ս. Էջիածին, 2008, էջ 163-170:

Манук Абебян о женщинах-авторах айренов

*Вано Егиазарян
Гаяне Овивян*

Резюме

Ключевые слова: *Наапет Кучак, ашуг, женщины-авторы айренов, рукописные факты, истинность теории М. Абебяна*

Великий ученый Манук Абебян, исследуя песенный цикл айренов (гномов), в своей работе неоднократно указывал на существование женщин-авторов айренов и пришел к однозначному выводу: айрены – это наши древние народно-гусанские песни, причем авторами и исполнителями некоторых из них были и женщины, что является научным открытием М. Абебяна, однако, некоторые исследователи, в силу своей неосведомленности, приписывают это открытие одному из авторов этих строк. Впоследствии теория М. Абебяна была подтверждена новыми текстами и рукописными фактами в наших исследованиях, посвященных айренам. М. Абебян не рассматривал данный вопрос отдельно, но в разных частях исследования «Диван Наапета Кучака» обращался к проблемам, связанным с женщинами-авторами айренов. Так, в подглаве «Варианты айренов» М. Абебян упоминает три айрена и сообщает: «В первой из этих песен певица (потому что это женская песня) рассказывает, как ее возлюбленный хотел уйти на рассвете – и она пыталась его остановить, но безуспешно». И, наконец, в качестве неоспоримого доказательства существования певиц следует сослаться на рукопись № 9599 из Ереванского Матенадарана имени Маштоца, в которой сохранились две иллюстрации, подкрепляющие реальность женщин-авторов айренов.

Manuk Abeghyan on the Female Authors of Hayrens

*Vano Yeghiazaryan
Gayane Hovivyan*

Summary

Key words: *Nahapet Kuchak, ashugh, female authors of hayren, manuscript facts, Abeghyan theory, truthfulness*

Prominent scholar Manuk Abeghyan, when examining the wide range of hayrens, in his work referred to the female authors who created hayrens and came to a reasonable conclusion that hayrens were our old Gusan-folk songs, the creators and performers of which were also women. This is considered to be Abeghyan's scientific novelty, which some researchers, due to their ignorance, attribute this discovery to the author of these lines. We'd like to mention that the theory suggested by M. Abeghyan has been substantiated with new texts and manuscript facts in our studies on hayrens. M. Abeghyan did not consider the issue under consideration separately, but in different parts of the study "Divan of Nahapet Kuchak" he examined the problems associated with female authors of the hayrens. Thus, in the subchapter "Variants of hayrens" M. Abeghyan mentions three airen and writes: "In the first of these songs, the singer (because it is a woman's song) tells how her lover wanted to leave at dawn - and she tried to stop him, but to no avail " And finally, as indisputable proof of the existence of singers, one should refer to manuscript No. 9599 from the Yerevan Matenadaran named after Mashtots, in which two illustrations have been preserved, confirming the fact of the existence of female authors of the hayrens.

Ներկայացվել է 25.01.2024 թ.
Գրախոսվել է 14.02.2024 թ.
Ընդունվել է տպագրության 30.05.2024 թ.